ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«10» հոկտեմբեր 2025թ. N 102-Ա

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱՄ ԱՅԴ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԱՏՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման N2 հավելվածի 16-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող կամ այդ գործառույթն իրականացնելու ցանկություն ունեցող անձանց վերապատրաստման դասընթացներին մասնակցելու դիմումատուների տվյալների՝

1) էլեկտրոնային մատյանի ձևը՝ համաձայն N1 հավելվածի

2) էլեկտրոնային մատյանի վարման կարգը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Սույն հրամանի N1 և N2 հավելվածների համաձայն կազմել և վարել մատյան նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման N2 հավելվածով նախատեսված վերապատրաստմանը չմասնակցած, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-

ի N1737-Ն որոշման N1 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին բավարարող և նույն հավելվածի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերած՝ թեստավորմանը մասնակցելու ցանկություն հայտնած դիմումատուների համար:

10.07.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի հուլիսի 10-ի
N 102-Ա հրամանի

ՄԱՏՅԱՆ

Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող կամ այդ գործառույթն իրականացնելու ցանկություն ունեցող անձանց վերապատրաստման դասընթացներին մասնակցելու դիմումատուների տվյալների

հ/հ	Դիմողի անունը, ազգանունը, հայրանունը	Կարգավիճակը		Թեստավորմանը նախապատրաստվելու եղանակը		Դիմումի ամսաթիվը և նախկին դիմումի ամսաթիվը՝ երկրորդ և հաջորդ անգամ դիմելու դեպքում	Դիմումի և կից փաստաթղթերի համապատասխանությունը՝ Կառավարության 12.10.2023թ. N1737-Ն որոշմանը	Թեստավորման ամսաթիվը	Թեստավորման արդյունքում հավաքած միավորների թիվը	Թեստավորումը հաջողությամբ հանձնած լինելու մասին տեղեկությունը	Ծանոթություն
		Բազմաբնակարան շենքի գործող կառավարիչ	Բազմաբնակարան շենքի կառավարման գործառույթ իրականացնելու ցանկություն հայտնած անձ	Վերապատրաստ-ման դասընթացներին մասնակցած	Գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերած						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.											
2.											
3.											
4.											
5.											

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի հուլիսի 10-ի
N102-Ա հրամանի

ԿԱՐԳ

Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող կամ այդ գործառույթն իրականացնելու ցանկություն ունեցող անձանց վերապատրաստման դասընթացներին մասնակցելու դիմումատուների տվյալների մատյանի վարման

1. Սույն կարգով սահմանվում է բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող կամ այդ գործառույթն իրականացնելու ցանկություն ունեցող անձանց վերապատրաստման դասընթացներին մասնակցելու դիմումատուների տվյալների մատյանի (այսուհետ՝ Մատյան) վարման կարգը:

2. Սույն կարգի համաձայն Մատյանը վարվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման N2 հավելվածով նախատեսված վերապատրաստմանը չմասնակցած, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման N1 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին բավարարող և նույն հավելվածի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերած՝ թեստավորմանը մասնակցելու ցանկություն հայտնած դիմումատուների համար:

3. Մատյանը կազմում, վարում և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կայքում հրապարակման համար համապատասխան ստորաբաժանմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման N2 հավելվածի 8-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով նշանակված՝ բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող կամ այդ գործառույթն իրականացնելու ցանկություն ունեցող անձանց վերապատրաստման դասընթացների և թեստավորման աշխատանքների կազմակերպման իրավասու ստորաբաժանումը:

4. Մատյանում լրացվում են հետևյալ տվյալները՝

1) հերթական համարը,

2) դիմողի անուն, ազգանուն, հայրանունը,

3) դիմողի կարգավիճակը (բազմաբնակարան շենքի գործող կառավարիչ կամ բազմաբնակարան շենքի կառավարման գործառույթ իրականացնելու ցանկություն հայտնած անձ)՝ համապատասխան սյունակում նշելով «այո» կամ «ոչ»,

4) թեստավորմանը նախապատրաստվելու եղանակը (վերապատրաստման դասընթացներին մասնակցած կամ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերած) համապատասխան սյունակում նշելով «այո» կամ «ոչ»,

5) դիմումի ամսաթիվը և նախկին դիմումի ամսաթիվը՝ երկրորդ և հաջորդ անգամ դիմելու դեպքում,

6) դիմումի և կից փաստաթղթերի համապատասխանությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման պահանջներին՝ նշելով «այո» կամ «ոչ»,

7) թեստավորման ամսաթիվը,

8) թեստավորման արդյունքում հավաքած միավորների թիվը,

9) թեստավորումը հաջողությամբ հանձնած լինելու մասին տեղեկատվությունը՝ նշելով «այո» կամ «ոչ»,

10) ծանոթություն՝ առկայության դեպքում լրացվում է լրացուցիչ այլ տեղեկատվություն:

5. Մատյանի տվյալները թարմացվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ՝ քան յուրաքանչյուր թեստավորումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: